Մեր գիւղում հազիւ մի տղամարդ կը գտնոի, որ նրա չափ ուժեղ լինի: Եթէ մէկը նրանից ուժեղ եւս լինի, բայց նա այնպիսի սատանայական ֆանդեր գիտէ, որ ձեռք ընկած մարդին կը կաշկանդէ եւ հաւի նման իր ոտների տակը կդնէ: Այդպիսի դէպքեր շատ են պատահել: Նրանցից օրինակ առնելով, մեր երեխաները եւս սկսել են հետեւել նրան: «Առողջ եւ զօրաւոր մարմնի մէջ է բնակւում զօրեղ հոգին», — ասում է նա, — «պէտք է աշխատել զօրացնել մարմինը»:

Ես խորին ուշադրութեամբ լսում էի: Տէր հայրը շարունակեց.

— Ես երբեք չեմ տեսել մի այդպիսի անհանգիստ մարդ, ոչ մի րոպէ դադարում չունի: Երբ դասերը կվերջացնէ, ոտքի վրայ մի բան կուտէ եւ իսկոյն վազ կը տայ դէպի դաշտ: Այնտեղ հնձաւորի հետ հունձ կանէ, որ ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է հնձել, այնտեղ հերկավարի հետ կհերկէ, որ ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է հերկել, եւ շատ անգամ, բահը առած, բանջարանոցներում առուներ կփորէ: Բանջարների մշակութիւնը մեր գիւղում բոլորովին անծանօթ էր, նա օրինակ տուեց մեզ, իր դպրոցի մօտ մշակելով մի գեղեցիկ պարտէզ: Երբ նրան ասում ես. վարժապետ, այդպէս չէ կարելի, մի փոքր հանգստացիր: Նա սովորաբար պատասխանում է. «հանգստութիւնը մեզ համար չէ, մենք շատ ետ ենք մնացել եւ այդ պատճառով շատ բան ունենք սովորելու եւ անելու... Մեզ պէտք է շտապելե...

— Միայն ձե՞ր գիւղով զբաղուած է նա:

— Ոչ միայն մեր գիւղով, այլ մեր շրջակայքի բոլոր գիւղերը գնում է նա: Ձիուց աւելի արագ է ուղեգնացութեան ժամանակ եւ երբեք ձի չէ նստում, այլ սովորութիւն ունի միշտ ոտքով շրջել: Ամէն գիւղում ճանաչում են նրան, ամէն տեղ յարգում են, եւ ամէնքը աշխատում են նրա խորհուրդներից օգուտ քաղել: Մինչեւ անգամ քուրդ գիւղացիների համար նա չէ խնայում իր աշխատութիւնները: Երբ նրանից հարցնում են, թէ դրանց հետ ի՞նչ գործ ունես, դրանք խօ մեզանից չեն, նա պատասխանում է. «դրանք մեր հարեւաններն են, եթէ դրանք քաղցած մնան, մեր հացը կը խլեն մեր ձեռքից: Եթէ ցանկանում ենք, որ քուրդը գողութիւն չանէ, պէտք է աշխատենք սովորեցնել նրան, որ իր վաստակով ապրուստ հայթայթէ»: Նա քրդերի ուսման մասին էլ է հոգ տանում: Նրա դպրոցում մի քանի քուրդ երեխաներ կան, եւ նրանց աւելի շատ է սիրում, քան թէ մեր երեխաներին: Մի անգամ այդ երեխաներից մէկը հիւանդացաւ. նա կատարեալ գժուածի նման էր այդ միջոցում. ամբողջ գիշերներ նստում էր նրա անկողնի մօտ, խորին տխրութեամբ նայում էր նրա վրայ, կարծես շնչառութեան ամէն մի վայրկեանը համբարելիս լինէր: Այնքան հոգ տարաւ, մինչեւ առողջացրեց: